«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

2026թ. 1-ին կիսամյակում իրականացվել են ԿՁԱՊԿ 10 սանի գնահատում (6 տղա, 4 աղջիկ): Ճանաչվել է 10 սանի ԿՁԱՊԿ-ը:

Իրականացվել են ԿԱՊԿ 67 սովորողի գնահատում (38 տղա, 29 աղջիկ), որից 21-ը առաջին անգամ (11 տղա, 10 աղջիկ), իսկ 46-ը հերթական անգամ (27 տղա, 19 աղջիկ), որից 8 սովորողի ԿԱՊԿ-ը չի ճանաչվել (6 տղա, 2 աղջիկ) , իսկ 59 սովորողի ԿԱՊԿ-ը ճանաչվել է (32 տղա, 27 աղջիկ):

Ընդհանուր թվով իրականացվել է 77 գնահատում (44 տղա, 33 աղջիկ), 0-6 տարիքային խմբում՝ 10 սան (6 տղա, 4 աղջիկ), 6-18 տարիքային խմբում՝ 67սովորող (38 տղա, 29աղջիկ): Նկատվում է ԿԱՊԿ գնահատման ներկայացնելու դիմում-հայտերի աճ՝ պայմանավորված ՏՄԱԿ-ի կողմից ծնողների հետ գնահատման գործընթացի վերաբերյալ իրազեկման խորհրդատվություններով և այլ մարզերից Սյունիք տեղափոխվելու պատճառով:

**2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի ՏՄԱԿ-ի սպասարկման տարածքում ԿԱՊԿ ունեցող 333 սովորողներից ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից աջակցություն մատուցվեց ընդհանուր թվով՝ 219 (181 սովորողի և ՆՈՒՀ-երի 38 սանի), 86 սովորողներ կրթություն և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանում են Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում, միայն ուսհաստատությունների կողմից աջակցություն են ստանում թվով՝ 14 (ՆՈՒՀ՝ 11 սան, դպրոց՝ 3 սովորող): Տարեցտարի ԿԱՊԿ ունեցող երեխաների թիվն աճում է, ունենք մասնագետների համալրման կարիք: 1 սովորող տեղափոխվել է այլ մարզ, 7 սովորող չի ստանում էրգոթերապիստի և տիֆլոմանկավարժի աջակցություն մասնագետ չունենալու պատճառով, 6 երեխայի ծնող հրաժարվել են մասնագիտական աջակցություններից՝ այլ մասնագետների մոտ աջակցություն ստանալու պատճառով): Դպրոցներում հոգեբանի ծառայություն է մատուցվել 24 սովորողի, հատուկ մանկավարժի՝ 174, լոգոպեդի՝ 70, սուրդոմանկավարժի՝ 2, սոցմանկավարժի՝ 11: ՆՈՒՀ-երում լոգոպեդի աջակցություն են ստացել 32, հատուկ մանկավարժի՝ 23, սոցմանկավարժի՝ 14, սուրդոմանկավարժի՝ 2 սան:

**3.Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ**

2026թ. 1-ին կիսամյակում իրականացվել են 42 վերապատրաստում /ՆՈւՀ՝ 11, դպրոց՝ 27, ՄԿՈւ՝ 4/ 63 ուսումնական հաստատությունում 924 անձի մասնակցությամբ: Իրականացված պլանային վերապատրաստումները /ըստ ՀՄԿ-ի կողմից տրամադրած մոդուլների/ նպաստել են հաստատությունների մանկավարժական, վարչական աշխատողների և ՄՀ աջակցության թիմի մասնագիտական կարողությունների զարգացմանը, իրազեկվել են ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության գործընթացի, ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման կարգի և այդ գործընթացում կիրառվող փաստաթղթերի, ձևաթղթերի մասին: Ըստ անհրաժեշտության, հայտերի հիման վրա կազմակերպվել են սեմինարներ հաստատու թյունների մանկավարժների, դաստիարակների, դասախոսների, ՄՀ աջակցության թիմի անդամների և ծնողների համար: Դեռևս որոշ մանկավարժներ դժվարություններ են ունենում ԱՈւՊ-ում աշխատելիս, հետևաբար այս թեմային ուղղված վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ: Իրականացվել են «Սոցիալական հմտություններ, արդյունավետ հաղորդակցում», «Օգնիր օգնողներին», «Հանրակրթական ուսումնական հաստատություն - ներում բռնության կանխարգելման և արձագանքման մեխանիզմները», «Աուտիզմի առաջացման պատճառները, տարածվածությունը և ճանաչողական ոլորտի առանձնահատկու- թյունները», «Մանկական վախերի դրսևորումները և դրանց հաղթահարման ուղիները», «Հուզական գրագիտությունը՝ որպես բուլինգի կանխարգելման միջոց», «Համակարգչային խաղերի վտանգավոր ազդեցությունը», «Գիտակից ծնողավարություն, ամեն օր փոքր քայլերով», «Սահմաններ, սահմանափակումներ, թվային կախվածություն», «Անցումային փուլերը երեխայի կյանքում» թեմայով վերապատրաստումները մանկավարժների, ծնողների և սովորողների հետ: Շարունակում ենք «Կրթության աջակցող միջոցներ. Մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ» թեմայով վերապատրաստումները, որոնք ուղղված են կրթության համընդհանուր հասանելիության, հավասարության և մասնակցության սկզբունքների ապահովմանը: Ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատողները ցուցաբերում են անհատական և խմբային աշխատանք ներին ակտիվ մասնակցություն, կարևորելով ֆիզիկական և ուսումնական միջավայրի մատչելիությունը, խելամիտ հարմարեցումների կիրառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքում: Վերապատրաստումներին մասնակցել են նախատեսվածից ավելի մասնակիցներ, ինչի արդյունքում ունեցանք մասնակիցների թվի աճ:

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Համակարգչային խաղերի վտանգավոր ազդեցությունը | 35 |
| 2 | Ծնողավարություն | 33 |
| 3 | Հեքիաթաթերապիայի կիրառումը նախադպրոցական տարիքում | 11 |

| | | |
|---|---|---|
| 4 | Օգնենք օգնողներին | 48 |
| 5 | Անցումային փուլերը երեխայի կյանքում | 29 |
| 6 | ԱՈւՊ-ի լրացման ընթացակարգը | 11 |
| 7 | Ընկալման փոփոխություն.ուսուցիչների հնարավորությունների և իրավունքների ընդլայնում | 52 |
| 8 | ԱՍԽ, նեյրոխաղեր, շարժախաղեր | 26 |
| 9 | Կրթության աջակցող միջոցներ. Մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 308 |
| 10 | Ռիսկային իրավիճակների արձագանքման ձևերը | 15 |
| 11 | Հաղորդակցման դժվարություններ ունեցող սովորողների սոցիալիզացիան դպրոցում | 13 |
| 12 | «Աուտիզմի առաջացման պատճառները, տարածվածությունը և ճանաչողական ոլորտի առանձնահատկությունները» | 21 |
| 13 | «Մանկական վախերի դրսևորումները և դրանց հաղթահարման ուղիները» | 22 |
| 14 | «Հուզական գրագիտությունը՝ որպես բուլինգի կանխարգելման միջոց» | 21 |
| 15 | «Սահմաններ, սահմանափակումներ, թվային կախվածություն» | 13 |
| 16. | «Հանրակրթական ուսումնական հաստատություններում բռնության կանխարգելման և արձագանքման մեխանիզմները», «Աուտիզմի առաջացման պատճառները | 161 |
| 17. | «Սոցիալական հմտություններ, արդյունավետ հաղորդակցում» | 32 |

**4. Խորհրդատվություն**

2026թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 69 խորհրդատվություն /ՆՈւՀ՝ 21, դպրոց՝ 43, ՄԿՈւ՝ 5/69 հաստատությունում 692 անձի մասնակցությամբ: Պլանային խորհրդատվություններ են իրականացվել հետևյալ թեմաներով՝

. ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ գնահատման գործընթաց

.Ծնող-Հաստատություն-ՏՄԱԿ համագործակցության ապահովում

.Ծնողավարման հմտություններ

.ԱՈւՊ/ԱՈւՁՊ

.Խելամիտ հարմարեցումների ձեռք բերում և կիրառում

Մատուցվել են մասնագիտական խորհրդատվություններ /լոգոպեդ, հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ/ ծնողներին նրանց անհանգստացնող խնդիրների, հարցերի վերաբերյալ: Բավականին ակտիվացել է ծնող-հաստատություն-մասնագետ կապը, ծնողները ներգրավված են ԱՈւՊ/ԱՈւՁՊ-ի մշակման և իրականացման գործընթացում: Վերջին շրջանում անհրաժեշտություն է առաջացել տրամադրել ավելի շատ խորհրդատվություններ <<Խոսքային շնչառության զարգացման ուղղությունները>>, <<Հարգալից հաղորդակցումը որպես դաստիարակության գործիք>>, <<Հոգեսոցիալական բարեկեցության խթանում>>, «Ագրեսիվության լիցքաթափման առավել ընդունելի միջոցի ընտրություն, համապատասխան մեթոդների կիրառում», «Հանդուրժողականություն, համագործակցություն», «Կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման, հույզերի կարգավորման վերաբերյալ», թեմաներով, ինչի արդյունքում էլ ունեցանք խորհրդատվությունների, խորհրդատվություն ստացած անձանց թվի աճ, հատկապես՝ ծնողների: Իրականացրել ենք դպրոցի հոգեբանների հետ հանդիպում-քննարկում՝ ուղղված հոգեբանի տարեկանի պլանի, եռամսյակային հաշվետվությունների ճիշտ համակարգմանը: ՏՄԱԿ-ի մասնագետներով կենտրոնում կազմակերպել ենք սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ, խաղ-վարժություններ, մասնագիտական վիկտորինաներ ուղղված մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը, առաջավոր փորձի փոխանակմանը:

**5. Մշտադիտարկում**

Իրականացվել են թվով 82 մշտադիտարկումներ, որից 48-ը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում, 28-ը՝ ՆՈՒՀ-երում /6 մասնաճյուղերում/ և 6-ը՝ ՄԿՈՒ-ներում: Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ առկա են անհրաժեշտ փաստաթղթերը, լավ համագործակցում են ծնողների հետ: Դպրոցներում հոգեբանները դեռևս շատ անելիքներ ունեն անելու, որովհետև նոր են այս բնագավառում: Նրանց մեթոդական աջակցություն են տրամադրում ՏՄԱԿ-ի հոգեբանները: Մասնագետները դասալսումներ են կատարել և խորհրդատվություններ տրամադրել մանկավարժներին և ծնողներին: Հաստատությունները ձեռք են բերել խելամիտ հարմարեցումների համար նախատեսված դիդակտիկ պարագաներ և գույք: Որոշ դպրոցներ գտնվում են հիմնանորոգման և վերանորոգման փուլերում: Գրեթե բոլոր ՆՈՒՀ-երը վերանորոգված և ապահովված են նոր գույքով: Ունեն ռեսուրս սենյակներ, որտեղ էլ իրականացվում են անհատական պարապմունքները:

## 6. Համագործակցություն

Կապանի ՏՄԱԿ-ը շարունակում է համագործակցել ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ների, Սյունիքի մարզպետարանի, Կապանի համայնքապետարանի, ՄՍԾ-ի, Վորլդ ՎԻժն Կապանի ՏԾ-ի, Կապանի ոստիկանության բաժնի, Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնի, Կապանի սոցիալական աջակցության կենտրոնի հետ: Կլոր սեղանների շուրջ կատարել ենք դեպքերի քննարկումներ, տվել համապատասխան իրավիճակային խնդիրների լուծման առաջարկներ: Համագործակցում ենք դպրոցների մենթորների հետ, կազմակերպում համատեղ դասընթացներ և քննարկումներ: Հանդիպում է կազմակերպվել Քաջարանի համայնքապետարանում, որտեղ քննակեցինք ՆՈՒՀ-ում հատուկ մանկավարժների ծառայությունների վերաբերյալ հարցը: Կենտրոնում առկա թափուր հաստիքների համալրման համար գրություններ են ուղարկվել Կապանի, Քաջարանի, Մեղրու համայնքապետարաններ և Կապանի ՄՍԾ:

Կենտրոնի անվանումը՝ <<Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ

Տնօրեն՝ ______ (ստորագրություն) Լիանա Գրիգորյան (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01 » «07» 2026թ.